ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<10>> ԱՊՐԻԼ 2018 թվականի N 17

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի ավագանու նիստի օրակարգը.

1. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ 33-ՐԴ ՈՐՈՇՈՒՄՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

   /Հարցը ներկայացնում է՝ համայնքի ղեկավարի խորհրդական Պ. Հայրապետյան/

2. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 47 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

   /Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի քարտուղար Կ. Մելքոնյանը/

3. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

   /Հարցը ներկայացնում է՝ ֆինտնտ և գանձումների բաժնի պետ Լ. Հովհաննիսյանը/

4. ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

   /Հարցը ներկայացնում է՝ համայնքի ղեկավարի խորհրդական Պ. Հայրապետյան/

ԿՈՂՄ (8)
ավագանու անդամներ՝

1. ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՌՈՄԱ _____
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄ _____
3. ՀԱԿՈԲՅԱՆ ԱԶԱՏ _____

4. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ _____

5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԵՅ _____

6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ _____

7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԻՆԱ _____

8. ՓԱՆՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<10>> ԱՊՐԻԼ 2018 թվականի N 18-Ն

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ 33-Ն ՈՐՈՇՈՒՄՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան 2018թ.-ին Արարատ քաղաքային համայնքին հատկացվել է 6,210.300 ՀՀ դրամ: Այդ գումարի սահմաններում նախապես կազմված ծրագրով նախատեսված աշխատանքները իրականացնելու նպատակով կազմվել է նախագիծ-նախահաշիվ և օրենքով սահմանված կարգով հայտարարվել է մրցույթ:

Մրցույթում հաղթած մասնակիցն առաջարկել է նախատեսված աշխատանքները կատարել 3,200.000 ՀՀ դրամով, ինչի արդյունքում ունեցել ենք 2,883.900 ՀՀ դրամի տնտեսում: Տնտեսված գումարը նպատակային օգտագործելու, ծրագրի շարունակականությունն ապահովելու և ոռոգման նոր ցանցի անցկացման աշխատանքներն ավարտին հասցնելու նպատակով.

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1) Հաստատել համայնքի 2018թ. բնապահպանական ծրագիրը / հավելված 1/:

2) Համայնքի ղեկավարին՝ կազմել նոր նախահաշիվներ և ժամանակացույցեր:

ԿՈՂՄ (8)

ավագանու անդամներ՝

1. ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՌՈՄԱ _____
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄ _____
3. ՀԱԿՈԲՅԱՆ ԱԶԱՏ _____
4. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ _____
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԵՅ _____

6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ _____

7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԻՆԱ _____

8. ՓԱՆՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

Հավելված - 1
Հաստատվել է Արարատի
քաղաքային համայնքի ավագանու
2018թ. ապրիլի 10-ի թիվ 04 նիստի
թիվ 18 -Ն որոշումով

Արարատի քաղաքային համայնքի 2018թ.
բնապահպանական ծրագիրը

1.Նախաբան

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» 2001թ. մայիսի 15-ի Հայաստանի Հանրապետությյան օրենքի հաշվարկվել է 6,210.300 դրամի սուբվենցիա: Քանի որ, հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպությունը ծրագրով նախատեսված 6,210.300 ՀՀ դրամի աշխատանքները կատարում է 3,200.000 ՀՀ դրամով, հետևաբար մնացած գումարը՝ 2,883.900 ՀՀ դրամը նախատեսվում է օգտագործել ծրագիրը շարունակելու համար:
Սույն ծրագիրը մշակելիս համայնքապետարանն առաջնորդվել է Հայաստանի Հանրապետության վերոհիշյալ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, <<Բնապահպանական ծրագրերի մշակման /նախագծման/ մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. փետրվարի 27-ի թիվ 197-Ն որոշումով հաստատված կարգի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014թ. դեկտեմբերի 10-ի N 1253-Ա որոշման պահանջներով:
Ծրագիրը մշակելիս հաշվի է առնվել նախորդ տարիներին բնապահպանական վճարներից կատարված մասհանումների հաշվին քաղաքում իրականացված ծրագրերը, ինչպես նաև ներկա պայմաններում առավել հրատապ լուծում պահանջող՝ քաղաքային իշխանությանը և բնակչությանը խիստ մտահոգող հարցերը, որոնց շարքում առաջնահերթ է համարվում ոռոգման ջրով ապահովելը:

2. Ծրագրի նպատակը

Արարատի քաղաքային համայնքի 2018թ. բնապահպանական ծրագրի հիմնական և գլխավոր նպատակը քաղաքը ոռոգման ջրով ապահովելն է: Արարատ քաղաքում գործում է երկու խորքային հոր, սակայն ոռոգման ցանցի բացակայության պատճառով ծառերն ու կանաչ տարածքները ոռոգվում են ջրատար մեքենայով, որն արդյունավետ չէ: Մարդիկ տնամերձ հողամասերը ոռոգում են հիմնականում խմելու ջրով, շատ տարածքներ անմշակ են մնում: Ոռոգման ցանցի անցկացումը մասնավորապես կլուծի քաղաքի կանաչ մակերեսների՝ եղած ծառերի ու թփերի պահպանման ու ավելացման, անմշակ մնացած կամ խմելու ջրով ոռոգվող տնամերձ հողամասերի մշակման ու խմելու ջրի խնայողության, ուսումնական

հաստատություններին, մանկապարտեզներին և քաղաքային հիվանդանոցին կից հողատարածքների ոռոգման հարցը:

3. Ծրագրի իրավական հիմքերը

Ծրագիրն իրականացվելու է Արարատ քաղաքի վարչական տարածքում գործող ձեռնարկությունների կողմից արտադրական գործունեության հետևանքով շրջակա, այդ թվում օդային ավազան վնասակար նյութերի արտանետման և սպառման թափոնների սահմանված կարգով տեղադրման, շրջակա միջավայր վնասակար նյութերի և միացությունների արտանետման համար բնապահպանական վճարներից, համայնքին կատարված մասհանումների միջոցներով:
Ծրագրի իրականացման համար բնապահպանական վճարներից տրամադրված սուբվենցիան չբավարարելու դեպքում, նկատի ունենալով ծրագրի հրատապությունը, համայնքն իր միջոցներից լրացուցիչ հատկացումներ կկատարի այդ նպատակի համար:

4. Ծրագրի շահառուները և մատուցվող ծառայությունները

Ծրագրի շահառուներն են համարվում Արարատ քաղաքի ողջ բնակչությունը, ուսումնական և նախադպրոցական հաստատությունները, քաղաքային հիվանդանոցը, տնամերձ հողամաս ունեցող բնակիչները, ինչպես նաև քաղաքի հանգստի գոտուց օգտվող շրջակա բնակավայրերի բնակիչները: Ոռոգման ցանցի հարցի լուծման շնորհիվ քաղաքում մեծ չափով կխնայվի նաև խմելու ջուր:
Ծրագրի իրականացումը կնպաստի նաև բնակչության առողջության պահպանմանը՝ շնորհիվ կանաչ մակերեսների ավելացման ու միկրոկլիմայի ստեղծման, ինչպես նաև կկանխվի քամու ու տրանսպորտի երթևեկության հետևանքով բարձրացող փոշին:

5. Ծրագրի խնդիրները և դրանց կապը

Ծրագիրը ներառում է երկու բաղադրիչ. կլուծվի բնապահպանական և առողջապահական խնդիրներ: Ծրագրի իրականացման շնորհիվ կլուծվեն քաղաքը կանաչ ու գրավիչ տեսքի բերելու, միկրոկլիմայի ստեղծման, օդային ավազանի և բնակչության առողջության պահպանման հարցերը, պայմաններ կստեղծվեն բնակչության առողջ ապրելակերպի համար բարենպաստ պայմանների ստեղծման, մանուկների և պատանիների մոտ բնության և կանաչ տարածքների պահպանման նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորմանն ու դաստիարակմանը, ինչպես նաև բնակիչները հնարավորություն կունենան մշակելու և ոռոգելու իրենց տնամերձ հողամասերը բակային կանաչ տարածքներն ու ծառերը:
Կխնայվի նաև այդ նպատակով երբեմն օգտագործվող խմելու ջուրը:

6. Ծրագրի իրականացման եղանակը

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2018թ. համայնքին հատկացվելիք 6,210.300 դրամից նախորդ մրցույթի արդյունքներից մնացած 2,883.900 ՀՀ դրամ բնապահպանական վճարներից կատարվելիք մասհանման միջոցով: Քաղաքում նախատեսվում է անցկացնել ոռոգման ցանց պոլիէթիլենային խողովակների միջոցով և այն հասցնել ոռոգվող տարածքներին

Տեխնիկական բնութագիր

N	Աշխատանքի անվանումը	Աշխատանքի բնութագիր
1	Արարատ քաղաքում կառուցել ոռոգման ցանց պոլիէթիլենային խողովակներով՝ ներառյալ կառուցվող ցանցի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	Արարատ քաղաքի Խանջյան, Սպանդարյան, Շահումյան, Չարենց փողոցների և քաղաքային այգու ոռոգելի տարածքները ոռոգել անձրևացման և ընդհանուր ոռոգման եղանակով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<10>> ԱՊՐԻԼ 2018 թվականի N 19

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 47 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Արարատ քաղաքային համայնքի 2017թ. դեկտեմբերի 15-ի թիվ 47 որոշմամբ հաստատված համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի կառուցվածքում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետի հաստիքը (պաշտոնի անձնագրի ծածկագիր 3.2-2) տեղափոխել ֆինանսատնտեսական և զանձումների բաժին:
2. Հաստատել փոփոխված հաստիքացուցակը:

ԿՈՂՄ (8)

ավագանու անդամներ՝

1. ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՌՈՄԱ _____
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄ _____
3. ՀԱԿՈԲՅԱՆ ԱԶԱՏ _____
4. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ _____
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԵՅ _____
6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ _____
7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԻՆԱ _____
8. ՓԱՆՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

Հավելված N2
Հաստատված է համայնքի ավագանու
2017թ. դեկտեմբերի 15-ի թիվ 47 որոշմամբ
փոփոխությունը համայնքի ավագանու 2018թ.
մարտի 16-ի թիվ 16 որոշմամբ
փոփոխությունը համայնքի ավագանու 2018թ.
ապրիլի 10-ի թիվ 119 որոշմամբ

ԱՐԱՐԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2018թ.

Աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը՝ 53 հոգի

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ (ՀՀ հազ. դրամ)
Համայնքի ղեկավար	1	260,0
ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	2	206,0
Համայնքի ղեկավարի խորհրդական	2	173,0
Համայնքի ղեկավարի օգնական	1	160,0
Համայնքի ղեկավարի ռեֆերենտ	1	90,0
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ		
Աշսատակազմի քարտուղար /1.1-1/	1	202,0
Ֆինանսատնտեսական և գանձումների բաժին		
Բաժնի պետ /2.1-1/	1	196,0
Բաժնի պետի տեղակալ /2.2-1/	1	187,0
Գլխավոր մասնագետ /2.3-1/	1	145,0
Գլխավոր մասնագետ /գլխավոր հաշվապահ/ /2.3-2/	1	145,0
Առաջատար մասնագետ /3.1-1/	1	123,0
1-ին կարգի մասնագետ /3.2-1/	1	117,0
1-ին կարգի մասնագետ /իրավաբան/ /3.2-2/	1	117,0
2-րդ կարգի մասնագետ / 3.3-1/	1	110,0
Ներքին աուդիտի բաժին		
Բաժնի պետ /2.1-3/	1	196,0
Առաջատար մասնագետ-աուդիտոր /3.1-5/	1	123,0
Աշխատակազմ		
Գլխավոր մասնագետ /2.3-4/	1	145,0
Գլխավոր մասնագետ / 2.3-5/	1	145,0
Գլխավոր մասնագետ /2.3- 6/	1	145,0

Առաջատար մասնագետ /3.1-2/	1	123,0
Առաջատար մասնագետ /3.1-3 /	1	123,0
2-րդ կարգի մասնագետ /3.3-2/	1	110,0
Սոցիալական աջակցության Արարատի տարածքային բաժին առանձնացված ստորաբաժանում		
Բաժնի պետ /1.3-1/	1	256.623
Գլխավոր մասնագետ - գլխավոր հաշվապահ /2.3-8/	1	181.885
Գլխավոր մասնագետ-ադմինիստրատոր. /2.3-7/	1	181.885
Գլխավոր մասնագետ / 2.3-9/	1	181.885
Առաջատար մասնագետ /3.1-4/	1	133.603
ՔԿԱԳ Արարատի տարածքային բաժին		
Բաժնի պետ /1.3-2/	1	256,623
1-ին կարգի մասնագետ /3.2-3/	1	133,603
ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
Տեղեկատվական համակարգի և լրատվության պատասխանատու	1	110,0
Քարտուղարուհի	1	108,0
Գործավար-օպերատոր	4	85,0
Տնտեսվար	1	100,0
Վարորդ	1	150,0
Հավաքարար	2	85,0
Էլեկտրիկ	1	77,904
ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ		
Հաշվապահ	1	76,601
Գանձապահ	1	76,601
Օպերատոր	1	81,754
Գանձող	8	72,752

ԿՈՂՄ (8)

ավագանու անդամներ՝

1. ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՌՈՄԱ _____

2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄ _____

3. ՀԱԿՈԲՅԱՆ ԱԶԱՏ _____

4. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ _____

5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԵՅ _____

6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ _____

7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԻՆԱ _____

8. ՓԱՆՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<10>> ԱՊՐԻԼ 2018 թվականի N 20-Ն

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Աբովյան 12 և Խանջյան 56 հանրակացարանների շենքերի պատշգամբների անբարվոք և վտանգավոր վիճակը, քաղաքի Կոմիտաս 4 հասցեում գտնվող կանգառի կառուցման, քաղաքի համար նոր նստարանների և կրակմարիչների ձեռքբերման նպատակով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5րդ, 38-րդ հոդվածի 1-ին կետերի 1-ին ենթակետի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի 2018թ. բյուջեում կտարված հետևյալ փոփոխությունները.

1) Պակասեցնել՝ համայնքի բյուջեի 0451.51 «Ճանապարհային տրանսպորտ» ծրագրի

ա) 5113 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածը 1841,2 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 7279,454.3 հազ. դրամ,

բ) 5134 «Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում» հոդվածը 450,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 270,0 հազ. դրամ: Սահմանել ծրագրի ծախսային պլանը 7549,454.3 հազ. դրամ:

2) Պակասեցնել՝

2.1) 1112.51 «Համայնքի պահուստային ֆոնդեր» ծրագրի 4891 «Պահուստային ֆոնդեր » հոդվածը 750,0 հազ.դրամ: Սահմանել համայնքի բյուջեի պահուստային ֆոնդը 1445,5հազ. դրամ:

Ընդամենը պակասեցում 3041.2 հազ. դրամ:

1) Ավելացնել՝

1.1) 0661.54 «Բազմաբնակարան շենքերի բարեկարգում» ծրագրի 5113 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածը 1300,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 1300,0 հազ. դրամ, 1.2) Նույն ծրագրի 5134 «Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում» հոդվածը 30,0 հազ. դրամ: Սահմանել ծրագրի ծախսային պլանը 1330,0 հազ. դրամ:

2) Ավելացնել՝

2.1) 0451.59 «Փողոցների պահպանում և շահագործում» ծրագրի 5112 «Շենքերի և շինությունների կառուցում» հոդվածը 518,2 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 518,2 հազ. դրամ,

2.2) Նույն ծրագրի 5134 «Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում» հոդվածը 20,0 հազ.

2) Ավելացնել՝

2.1) 0451.59 «Փողոցների պահպանում և շահագործում» ծրագրի 5112 «Շենքերի և շինությունների կառուցում» հոդվածը 518,2 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 518,2 հազ. դրամ,

2.2) Նույն ծրագրի 5134 «Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում» հոդվածը 20,0 հազ. դրամ:

Սահմանել ծրագրի ծախսային պլանը 538,2 հազ. դրամ:

3) Ավելացնել՝

3.1) 0851.55 «Հանգիստ մշակույթ և կրոն» ծրագրի 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածը 423,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 423,0 հազ. դրամ:

Սահմանել ծրագրի ծախսային պլանը 2923,0 հազ. դրամ:

4) Ավելացնել՝

4.1) 0321.55 «Փրկարար ծառայություն» ծրագրի 4269 «Հատուկ նպատակային նյութեր» հոդվածը 750,0 հազ. դրամ:

Սահմանել վերջինիս ծախսային և ծրագրային պլանը 750,0 հազ. դրամ:

Ընդամենը ավելացում՝ 3041.2 հազ. դրամ:

5) Համայնքի ղեկավարին՝ կազմել նոր նախահաշիվներ և ժամանակացույցեր:

ԿՈՂՄ (8)

ավագանու անդամներ՝

1. ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՌՈՄԱ _____
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄ _____
3. ՀԱԿՈԲՅԱՆ ԱԶԱՏ _____
4. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ _____
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԵՅ _____
6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ _____
7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԻՆԱ _____
8. ՓԱՆՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<10>> ԱՊՐԻԼ 2018 թվականի N 21-Ն

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին>> 2001թ. մայիսի 15-ի ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան Արարատի քաղաքային համայնքի 2019թ. համար հաշվարկվել էր 3,177.700 ՀՀ դրամ:
Ի կատարումը Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014թ. դեկտեմբերի 10-ի N1253-Ա որոշման պահանջների, մշակվել է համայնքի 2019թ. բնապահպանական ծրագիրը և այն ներկայացվում է համայնքի ավագանու հաստատմանը:

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել քաղաքային համայնքի 2019թ. բնապահպանական ծրագիրը / հավելված 1/:
2. Նկատի ունենալով ծրագրի հույժ կարևորությունը քաղաքի համար, առաջարկել համայնքի ղեկավարին հետամուտ լինել ծրագրով նախատեսված Խանջյան, Սպանդարյան, Շահումյան, Չարենցի փողոցների և քաղաքային այգու ոռոգման ցանցի կառուցման աշխատանքներին:
3. Ծրագիրը ներկայացնել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն:

ԿՈՂՄ (8)

ավագանու անդամներ՝

1. ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՌՈՄԱ _____
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄ _____
3. ՀԱԿՈԲՅԱՆ ԱԶԱՏ _____
4. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ _____
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԵՅ _____

6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ _____

7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԻՆԱ _____

8. ՓԱՆՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

Հավելված - 1
Հաստատվել է Արարատի
քաղաքային համայնքի ավագանու
2018թ. ապրիլի 10-ի թիվ 04 նիստի
թիվ 21-Ն որոշումով

Արարատի քաղաքային համայնքի 2019թ.
բնապահպանական ծրագիրը

1.Նախաբան

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» 2001թ. մայիսի 15-ի Հայաստանի Հանրապետությոն օրենքի պահանջներին համապատասխան Արարատի քաղաքային համայնքին 2018թ. համար հաշվարկվել է 3,177.700դրամի սուբվենցիա:
Սույն ծրագիրը մշակելիս համայնքապետարանն առաջնորդվել է Հայաստանի Հանրապետության վերոհիշյալ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, <<Բնապահպանական ծրագրերի մշակման /նախագծման/ մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. փետրվարի 27-ի թիվ 197-Ն որոշումով հաստատված կարգի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2016թ. դեկտեմբերի 29-ի N 1256-Ա որոշման պահանջներով:
Ծրագիրը մշակելիս հաշվի է առնվել նախորդ տարիներին բնապահպանական վճարներից կատարված մասհանումների հաշվին քաղաքում իրականացված ծրագրերը, ինչպես նաև ներկա պայմաններում առավել հրատապ լուծում պահանջող՝ քաղաքային իշխանությանը և բնակչությանը խիստ մտահոգող հարցերը, որոնց շարքում առաջնահերթ է համարվում ոռոգման ջրով ապահովելը:

2. Ծրագրի նպատակը

Արարատ քաղաքային համայնքի 2019թ. բնապահպանական ծրագրի հիմնական և գլխավոր նպատակը քաղաքը ոռոգման ջրով ապահովելն է: Արարատ քաղաքում գործում է երկու խորքային հոր: 2018թ. բնապահպանական ծրագրով քաղաքին հատկացված 6,210.300 դրամ սուբվենցիայի միջոցով կառուցվեց ոռոգման ցանց: Սակայն դեռևս կան շատ տարածքներ, որոնց ոռոգումը կատարվում է ջրատար մեքենայով, որն արդյունավետ չէ: Մարդիկ տնամերձ հողամասերը ոռոգում են հիմնականում խմելու ջրով, շատ տարածքներ անշակ են մնում: Ոռոգման ցանցի անցկացումը մասնավորապես կլուծի քաղաքի կանաչ մակերեսների՝ եղած տնամերձ հողամասերի մշակման ու խմելու ջրի խնայողության, ուսումնական հաստատություններին, մանկապարտեզներին և քաղաքային հիվանդանոցին կից հողատարածքների ոռոգման հարցը:

3. Ծրագրի իրավական հիմքերը

Ծրագիրն իրականացվելու է Արարատ քաղաքի վարչական տարածքում գործող ձեռնարկությունների կողմից արտադրական գործունեության հետևանքով շրջակա, այդ թվում օդային ավազան վնասակար նյութերի արտանետման և սպառման թափոնների սահմանված կարգով տեղադրման, շրջակա միջավայր վնասակար նյութերի և միացությունների արտանետման համար բնապահպանական վճարներից, համայնքին կատարված մասհանումների միջոցներով:
Ծրագրի իրականացման համար բնապահպանական վճարներից տրամադրված սուբվենցիան չբավարարելու դեպքում, նկատի ունենալով ծրագրի հրատապությունը, համայնքն իր միջոցներից լրացուցիչ հատկացումներ կկատարի այդ նպատակի համար:

4. Ծրագրի շահառուները և մատուցվող ծառայությունները

Ծրագրի շահառուներն են համարվում Արարատ քաղաքի ողջ բնակչությունը, ուսումնական և նախադպրոցական հաստատությունները, քաղաքային հիվանդանոցը, քաղաքի և բակային կանաչապատ տարածքներից օգտվող ազգաբնակչությունը: Ոռոգման ցանցի հարցի լուծման շնորհիվ քաղաքում մեծ չափով կխնայվի նաև խմելու ջուր:
Ծրագրի իրականացումը կնպաստի նաև բնակչության առողջության պահպանմանը՝ շնորհիվ կանաչ մակերեսների ավելացման ու միկրոկլիմայի ստեղծման, ինչպես նաև կկանխվի քամու ու տրանսպորտի երթևեկության հետևանքով բարձրացող փոշին:

5. Ծրագրի խնդիրները և դրանց կապը

Ծրագիրը ներառում է երկու բաղադրիչ. կլուծվի բնապահպանական և առողջապահական խնդիրներ: Ծրագրի իրականացման շնորհիվ կլուծվեն քաղաքը կանաչ ու գրավիչ տեսքի բերելու, միկրոկլիմայի ստեղծման, օդային ավազանի և բնակչության առողջության պահպանման հարցերը, պայմաններ կստեղծվեն բնակչության առողջ ապրելակերպի համար բարենպաստ պայմանների ստեղծման, մանուկների և պատանիների մոտ բնության և կանաչ տարածքների պահպանման նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորմանն ու դաստիարակմանը:
Կխնայվի նաև այդ նպատակով երբեմն օգտագործվող խմելու ջուրը:

6. Ծրագրի իրականացման եղանակը

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019թ. համայնքին հատկացվելիք 3,177.700 դրամ բնապահպանական վճարներից կատարվելիք մասհանման միջոցով: Քաղաքում նախատեսվում է անցկացնել ոռոգման ցանց պոլիէթիլենային խողովակների միջոցով և այն հասցնել ոռոգվող տարածքներին

Տեխնիկական բնութագիր

N	Աշխատանքի անվանումը	Աշխատանքի բնութագիր
1	Արարատ քաղաքում կառուցել ոռոգման ցանց պոլիէթիլենային խողովակներով՝ ներառյալ կառուցվող ցանցի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմումը	Արարատ քաղաքի Խանջյան, Սպանդարյան, Շահումյան, Չարենց փողոցների և քաղաքային այգու ոռոգելի տարածքներ ոռոգել անձրևացման և ընդհանուր ոռոգման եղանակով
		Ընդգրկել հարակից ոռոգվող տարածքները